

Ասկէ առաջ ցոյց տուի արդէն թէ որդան կը գործածուէր նկարակերտ զարդարելու համար «կազմուածս բազմականաց և անկուածոց», այսինքն հայ գորգերը: Ասոնք կը վկայուին Ասողիկէ, Յովհաննէս պատմագիր կաթողիկոսէ և ուրիշներէ: Ըստ Dr. F. R. Martinի «Արաքս գետին մօտ՝ մահմետական Հայաստանի մայրաքաղաք Տապիլի որդանով ներկուած բուրդէ հիւսուածեղէնները հռչակուող էին: Ընդհանրապէս Հայաստան նշանաւոր էր իր գօտիներով, ծածկոցներով, գորգերով, բարձերով և շղարշներով, բայց մանաւանդ այդ համբաւը շատ հեռուն կը տարածուէր մանիշակագոյն գրքերէն համար, որոնք Արաքսի Հայկական ներկ կ'անուանէին և որ ծիրանիին չափ թանկագին նկատուած էր: Այս ներկը մինչեւ Հնդկաստան կ'արտածուէր, և շատ փափուկ ըլլալուն համար մի միայն մետաքսի և բուրդի համար կրնար գործածուիլ, մինչդեռ բամբակի և ուրիշ նիւթերու համար գործածութիւնը կարելի չէր»¹:

Մարթինի յաջորդող սողերը ցոյց կուտան որդանը իբր յատկանիշ, իբր Trade Mark Հայկական գորգերուն: «Այդ մանուշակ-կարմիրը գրեթէ զուտ մանիշակագոյնի փոխուած պէտք է ըլլայ, քանի որ գայն բոլոր Հայկական գորգերուն վրայ ընդհանրապէս պզտիկ յատակներու ձեւին մէջ կը գտնենք: Իսկ Պարսկաստանի մէջ հազուադէպ կը պատահինք անոր»: Ասոր պատասխանեց Մր. Բոր: Այս պատասխանը հրատարակեցի թարգմանելով Բագմավէպի մէջ 1930 Սեպտ., բայց առ ի զիւրութիւն հոս կ'արտատպեմ խնդրոյ նիւթ մասը, որ ինչպէս ըսի է իբր պատասխան Մարթինի: «Փալով գոյներու մասին եղած պատճառաբանութեանց, Մարթին կ'ըսէ թէ ինք գտած է Հայկական ձեռագիր մը 1201էն՝ գծուած և ներկուած նոյն այն գոյներով որոնց կը հանդիպիք այս գորգերու մէջ, նախ և առաջ ինքնատիպ մանիշակագոյն (գիրմիզ) որ ծանօթ չէ ուրիշ շրջաններու և յատուկ է Հայկական լեռնային շրջաններուն: Այս գիրմիզը շատ

հին ժամանակներէն ի վեր յատկանշական էր այս շրջաններուն»: Եթէ Տր. Մարթին ըսել կ'ուզէ որ այն մասնաւոր մանիշակագոյնը որ կը գտնուի Վիշապ գորգերուն մէջ (շատ մութ կանխագոյն կտորներու, և աւելի բաց յեռնագոյններու մէջ) ծանօթ չէ որեւէ ուրիշ շրջանի, ինք կը սխալի որովհետեւ գոյնը որ պակաս է Վիշապ գորգերէն ոմանց՝ օրինակ կրաֆի գորգին մէջ՝ մը գտնուի կովկասեան մասնաւորապէս Գազագներու և նուրբ տաղիստաններու (հրապարակին վրայ ծանօթ իբր Գապիսդան) ինչպէս նաեւ կանխաւ հիւսուած շամախիներու մէջ, որոնցմէ մին (Բարիզ, Տէմօթին պատկանող) հնագոյն Վիշապ գորգերու մանիշակագոյնով յատկուած է ամբողջութեամբ: Գոյնը կ'երեւայ նաեւ՝ բայց աւելի հազուադէպօրէն՝ Շիրուան գորգերու, աւելի յաճախ Ղարապաղի շրջանին գորգերու և նոյն իսկ Քրդական շրջանի խորերէն բերուած գորգերու մէջ, երեւալով իբր ակներեւ նկարագիր Պարտէզ կոչուած կապերտներու վրայ: Նուազ յաճախ կ'երեւայ վաչկատունի գորգերու մէջ որոնք հրապարակ կը բերուին Փոքր Ասիոյ արեւմտեան եզերքի Մելէզ և Պերկամոյ քաղաքները, ինչպէս նաեւ երկրին արեւելեան մասին մէջ արտադրուող կարգ մը վաչկատունի գորգերուն մէջ: Վերջիններուն մեծագոյն մասին մանիշակագոյնը կը գունաթափի շուտով և գրեթէ ամբողջութեամբ, բայց ըստ երեւոյթի անաղարտ կը մնայ բաւական Մելէզ և Պերկամոյ կտորներուն մէջ: Այս Պերկամոյ կոչուած գորգերն ունին մօտիկ կապակցութիւն կովկասեան շրջաններու հետ: Բայց այս գորգերուն ներկերու և գոյներու խնդիրը արդէն արմատական կերպով քննուած և ճշտուած են ճագոպի կողմէ, եւ Մարթինի պատճառաբանութիւնները վերջնականապէս ջնջուած կը համարուին. և գայն դարձեալ հոս կրկնենք աւելորդ կը սեպեմ: Փաստերը կը ստիպեն զիս գալ

1. «A History of oriental carpets before 1800». London 1908.